ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ՀՀ, ք. Երևան, 0047, Ա. Արմենակյան 127, հեռ.՝ +374 (10) 65 00 86, էլ-հասցե՝ office@ena.am

# ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

№ ՀԿԸ - 03/20

«10» 12 2020թ.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ *Ընկերություն*), ի դեմս Գլխավոր տնօրեն Կարեն Հարությունյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, լիազորում է

**«Վոլիոս նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը** (ՀՎՀՀ՝ 00902375, գրանցման համարը՝ 282.120.940436, հասցե՝ ք. Երևան, Գյուլիքեխվյան փող., 23 շենք, 43 բն.), ի դեմս տնօրեն Արամ Շահինյանի (նույնականացման քարտ՝ 004803870, տրված 18.07.2014թ.-ին 001-ի կողմից)

1. Ընկերության անունից հանդես գալ Հայաստանի Հանրապետության համայնքների հետ կնքված կամ կնքվելիք՝ քանդման (վերականգնողական) անհետաձգելի (ոչ անհետաձգելի) աշխատանքների կատարման ընթացքում պետությանը կամ համայնքին պատճառվող վնասի վերականգնման մասին պայմանագրի (այսուհետ նաև Պայմանագիր) շրջանակներում, մասնավորապես՝
   - ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) աշխատանքների և այդ նպատակով Համայնքի տարածքում պետությանը կամ Համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում կամ ընդհանուր օգտագործման տարածքում (հող, փողոց, մայթ և այլն) քանդման աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվություն և ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու նպատակով վերկայացնել դիմումներ և անհրաժեշտ փաստաթղթեր,
   - ստանալ շինարարության թույլտվություններ և այլ փաստաթղթեր,
   - հետևել շինարարության թույլտվության մեջ նշված ժամկետում աշխատանքները սկսելուն՝ դրանց մասին Պայմանագրով սահմանված ժամկետում տեղեկացնելով համապատասխան համայնքին,
   - պահանջել համայնքից տրամադրել տեղեկատվություններ, որոնք անհրաժեշտ են լինելու Ընկերության՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների իրականացման համար,
2. բացի Պայմանագրի շրջանակներում վերոգրյալ լիազորությունների կատարումից Ընկերության անունից հանդես գալ ՀՀ կառավարության 19.03.2015թ.-ի «ՀՀ կառավարության որոշումը ՀՀ-ում կառուցապատման նպատակով

թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշմամբ շինարարության և/կամ քանդման թույլտվություն ստանալու համար սահմանված անհրաժեշտ գործողությունների կատարմամբ, մասնավորապես՝

- ճարտարապետահատակագծային առաջադրանք և շինարարության թույլտվություն ստանալու համար ներկայացնել դիմումներ և անհրաժեշտ փաստաթղթեր,
- ստանալ ներկայացված դիմումների պատասխանները,
- կատարել սույն լիազորագրից բխող այլ անհրաժեշտ գործողություններ:

Սույն լիազորագիրը տրվում է մեկ տարի գործողության ժամկետով՝ առանց վերալիազորման իրավունքի:

Կ. Հարությունյան